ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ. III

21-րդ դարի մարտահրավերներ և հնարավորություններ

DEVELOPMENT OF ECONOMY AND SOCIETY:
Challenges and Opportunities of 21st Century

РАЗВИТИЕ ЭКОНОМИКИ И ОБЩЕСТВА:
вызовы и возможности 21-ого века

ՀՊՏՀ 27-ՐԴ ԳԻՏԱԺՈՂՈՎ

2017 թ., նոյեմբերի 22-24

Երևան 2018

ՀՏԴ 330:06
ԳՄԴ 65
Տ 778

Հրատարակվում է
ՀՊՏՀ գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական խորհրդի նախագահ՝

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ
ՀՊՏՀ ռեկտոր, տ.գ.դ., պրոֆեսոր

Խմբագրական խորհուրդ՝

ԴԻԱՆԱ ԳԱԼՈՅԱՆ - *ՀՊՏՀ միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի վարիչ, տ.գ.դ., դոցենտ*
ՍՈՒՐԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ - *ՀՊՏՀ բնօգտագործման տնտեսագիտության ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր*
ԱՇՈՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ - *ՀՊՏՀ հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետի դեկան, տ.գ.դ., պրոֆեսոր*
ԽՈՐԵՆ ՄԽԻԹԱՐՅԱՆ - *ՀՊՏՀ գիտության և ասպիրանտուրայի բաժնի պետ, տ.գ.թ., դոցենտ*
ԱՇՈՏ ՍԱԼՆԱԶԱՐՅԱՆ - *ՀՊՏՀ ֆինանսների ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր*
ՎԱՐԴԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ - *ՀՊՏՀ տնտես. ինֆորմ. և տեղեկ. համակ. ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր*
ՅՈՒՐԻ ՍՈՒՎԱՐՅԱՆ - *ՀՊՏՀ կառավարման ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ ակադ., տ.գ.դ., պրոֆեսոր*
ԳԱԳԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ - *ՀՊՏՀ պրոռեկտոր, տ.գ.դ., պրոֆեսոր*

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ. 21-րդ դարի մարտահրավերներ և
Տ 778 **հնարավորություններ**: ՀՊՏՀ 27-րդ գիտաժողովի նյութեր / ՀՊՏՀ: - Եր.: Տնտեսագետ, 2018, 780 էջ:

ՀՏԴ 330:06
ԳՄԴ 65

ISBN 978-9939-61-177-8

© «Տնտեսագետ» հրատարակչություն, 2018 թ.

ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ

Գիտաժողովի հարգելի՝ մասնակիցներ,

շնորհավորում եմ բոլորիս Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի 27-րդ գիտաժողովի բացման առթիվ և ցանկանում եմ շնորհակալություն հայտնել գիտաժողովի բոլոր մասնակիցներին, ովքեր հետաքրքրություն են ցուցաբերել տնտեսության և հասարակության զարգացմանն առնչվող հրատապ հարցերի նկատմամբ:

Մեր համալսարանի տարեկան գիտաժողովները գեղեցիկ ավանդույթ են դարձել, բայց ես ուրախությամբ եմ նշում, որ դրանց կողքին այսօր առկա են մեր համալսարանի գիտական գործունեությունն արտացոլող այլ ձևաչափեր նույնպես: Հպարտությամբ եմ նշում, որ հետազոտական համալսարան դառնալու և մեր պետության տնտեսական կյանքին մասնագիտական մասնակցություն ունենալու իմ տեսլականը կամաց-կամաց կյանքի է կոչվում: Համալսարանի «Ամբերդ» հետազոտական կենտրոնի գործունեությունն այսօր տալիս է նշանակալի արդյունքներ. այստեղ ոչ միայն իրականացվում են հանրապետության տնտեսական արդիական հիմնախնդիրների վերաբերյալ հետազոտություններ, այլև կենտրոնի աշխատակիցները բուհի դասախոսական կազմի ներկայացուցիչների հետ, որպես փորձագետներ, հանդես են գալիս համապետական քննարկումներում:

Մինչ տարեկան գիտաժողովի կազմակերպումը գիտական սեմինարների ձևաչափերով հանդես եկան մեր ամբիոնները՝ շնորհանդեսներով ներկայացնելով իրենց ուսումնասիրության առանցքում առկա թեմաները: Այս ուսումնական տարվանից տրվեց գիտաուսումնական լաբորատորիաների մեկնարկը, ինչը գիտական դրամաշնորհներ, գիտաուսումնական խմբեր և գիտահետազոտական կյանքի աշխուժացմանը միտված այլ ձևաչափեր ներդնելու մեր մոտեցումների հրաշալի շարունակությունն է:

Համալսարանի տարեկան գիտաժողովը ես հատկապես կարևորում եմ ակնկալիքով, որ այն պետք է վեր հանի մեր հավաքական գիտական ներուժը, ցույց տա համալսարանում գիտական կյանքի որակական փոփոխությունը և դառնա հետագա գործունեության յուրօրինակ ուղենիշ: Այս գիտաժողովի հիմքում տնտեսության և հասարակության զարգացման հարցերն են, որոնք ի ցույց են դնում մեր դարաշրջանի մարտահրավերներն ու հնարավորությունները: Իսկապես, սրանք այնքան փոխկապակցված և կարևոր հարցեր են, որոնք չպետք է անտարբեր թողնեն տնտեսագետներին, չէ՞ որ չի կարող լինել հասարակական զարգացման որևէ մակարդակ՝ առանց կենսունակ տնտեսության:

Հուսով եմ, որ գիտաժողովը՝ իր բաժանմունքներով և կլոր սեղաններով, հնարավորություն կտա մասնագետներին ներկայացնելու իրենց մոտեցումները, բացահայտելու գիտաժողովի խորագրում արտացոլված թեման՝ իր բոլոր շերտերով և նրբություններով: Այնպես որ, արգասաբեր և աշխույժ աշխատանք եմ մաղթում Ձեզ:

Շնորհակալ եմ ուշադրության համար:

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ
ՀՊՏՀ ռեկտոր, պրոֆեսոր

ствия. В процессе активного вмешательства государства или уполномоченного государством специального органа, компании, имеюшие естественную монополию, должны максимально прилагать усилия чтобы не нарушать общественные интересы, с одной стороны, а также поддерживать нормальные условия труда для своего предприятия, с другой стороны.

HAYK KHACHATRYAN

THE ECONOMIC ESSENCE OF NATURAL MONOPOLY

Key words: *monopoly, natural monopoly, competitiveness, scale effect, demand, infrastructure*

The natural monopoly occurs in the process of objective reasons. It is a state of such a commodity market when a company better satisfies the demand of the given product. Natural monopolies has both positive and negative effects.In the process of activeintervention of the country or special authorized body thenatural monopoly companies must highly direct their efforts to not transgress the public interests as well as provide normal working conditions for their company.

ՍՈՍ ԽԱՉԻԿՅԱՆ
Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
ՀՊՏՀ Եղեգնաձորի մասնաճյուղի տնօրեն

ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄԻ ՄԻՋՈՑՈՎ[1]

Հիմնաբառեր. *տարածքային պլանավորում, զարգացում, տեխնոլոգիա, նորարարություն, հանրային մասնակցություն, որոշումների կայացում*

Յուրաքանչյուր երկրի տնտեսական համակարգում տարածքային պլանավորումն ու զարգացումն ունեն էական նշանակություն: Հենց այդ պատճառով էլ տարածքային քաղաքականությունը և համայնքային զարգացումը համարվում են ռազմավարական կառավարման կարևոր ուղղություններ: Հետևաբար՝ գիտատեխնոլոգիական զարգացման այսօրվա պայմաններում տարածքային քաղաքականությունը նույնպես պետք է հենվի ժամանակակից գործիքակազմի վրա: Թվային լուծումները, գիտական և հետազոտական մշակումները, սոցիալական ու մարդկային կապիտալը պետք է հանդիսանան տարածքային զարգացման ժամանակակից գործոններ՝ որպես նոր տնտեսության առանձնահատկություն:

Յուրաքանչյուր երկրի տնտեսական համակարգում տարածքային պլանավորումն ու զարգացումն ունեն էական նշանակություն: Հենց այդ պատճառով էլ տարածքային քա-

[1] Հոդվածը պատրաստվել է «Improving Inter-Community Decision-Making in Consolidated Communities through Civic Innovations» ծրագրի շրջանակներում:

ղաքականությունը և համայնքային զարգացումը համարվում են ռազմավարական կառավարման կարևոր ուղղություններ: Հետևաբար՝ գիտատեխնոլոգիական զարգացման այսօրվա պայմաններում տարածքային քաղաքականությունը նույնպես պետք է հենվի ժամանակակից գործիքակազմի վրա: Թվային լուծումները, գիտական և հետազոտական մշակումները, սոցիալական ու մարդկային կապիտալը պետք է հանդիսանան տարածքային զարգացման ժամանակակից գործոններ՝ որպես նոր տնտեսության առանձնահատկություն: Գաղափարների, նորարարությունների և տեխնոլոգիական լուծումների առաջացման համար մեգապոլիսները և խոշոր կենտրոնները չունեն որևէ առավելություն կենտրոններից հեռու գտնվող տարածքների համեմատ: Ավելին, այդպիսի տարածքներն ունեն առավելություններ բնապահպանական, գյուղատնտեսական, համայնքային, էկո և ագրոզբոսաշրջության ու այլ ոլորտներին առնչվող նորարարությունների զարգացման ու ներդրման առումով:

Նոր տնտեսության մեջ երկարաժամկետ կապիտալը, բնական ռեսուրսներն ու աշխատուժի ֆիզիկական ծավալներն այլևս որպես տնտեսական զարգացման հիմնական գործոններ չեն դիտարկվում, այլ դրանց փոխարեն առաջնահերթություն են ստացել գիտելիքը և դրա կիրառումը[1]: ՀՀ տարածքային համաչափ զարգացման քաղաքականության հիմքում հենց ռեսուրսային ներուժին վերաբերող դրույթներ են, որոնք այսօրվա պահանջներին համահունչ չեն: Հետևաբար՝ որպես ՀՀ տարածքային պլանավորման ու զարգացման քաղաքականության մեջ ներդնելով գիտելիքի վրա հիմնված տեխնոլոգիական լուծումներ, հնարավորություն կստեղծվի տարածքային տնտեսության ավանդական ճյուղերը կապակցելու նորարարությունների հետ և ապահովելու նոր տնտեսությանը բնորոշ արդյունավետություն: Իսկ գիտելիքը, տեխնոլոգիան և նորարարությունը հիմնականում ստեղծվում են բարձրագույն կրթական հաստատություններում ու հետազոտական կենտրոններում[2]:

Ակնհայտ է, որ ՀՀ տարածքային կառավարման համակարգում գիտահետազոտական կենտրոնները, հետևաբար՝ նաև գիտելիքի, տեխնոլոգիաների և նորարարությունների վրա հիմնված մշակումները չունեն որևէ առաջնահերթություն: Դա նշանակում է, որ նոր տնտեսության առանձնահատկությունները ներկայացված չեն տարածքային զարգացման քաղաքականության մեջ: Հատկապես տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մակարդակներում ինչպես պլանավորման, այնպես էլ կազմակերպման ոչ մի ընթացակարգ չի ներառում տեխնոլոգիական գործիքակազմ:

Տնտեսական զարգացման և համագործակցության կազմակերպության (ՏԶՀԿ) երկրներում տարածքային պլանավորման և զարգացման քաղաքականության մեջ «Տարածքային նորարարական ռազմավարության» (Regional Innovation Strategy) շրջանակ-

[1] A Practitioner's Guide: To Economic Development Tools for Regional Competitiveness in a Knowledge-Based Economy. Research conducted by U.S. Economic Development Administration grant, p. 5.

[2] Ole Damsgaard and Mitchell Reardon. Renewable Energy and Clean Technology – Tools for Regional Development. Working paper for Nordregio Conference 2009, p. 11.

ներում լայնորեն կիրառվում է նորարարությունների վրա հիմնված տեխնոլոգիական գործիքակազմը[1], որն իրականացվում է հետևյալ քայլերի հաջորդականությամբ.

1. նախաձեռնել տարածքային նորարարության երկխոսություն շահառուների միջև,
2. վերլուծել տարածքային նորարարական կարիքները և կարողությունները,
3. նախագծել նորարարական ռազմավարություն՝ բոլոր շահառուների ուղղակի ներգրավմամբ,
4. ընտրել նորարարական աջակցության գերակայությունները,
5. իրականացնել ռազմավարությունը,
6. ներդնել և օգտագործել ռազմավարության գնահատման ու մշտադիտարկման համակարգ:

Այս քայլերն իրականացվում են հետևյալ հիմնական նպատակներն ապահովելու համար.

- տարածքային հետազոտությունների և զարգացման (R&D) կարողությունների հզորացում,
- ՓՄՁ-ներում կիրառվող նորարարությունների խթանում,
- ձեռնարկատիրության և նոր կազմակերպությունների ստեղծման խրախուսում,
- մարդկային կապիտալի զարգացում:

Տարածքային պլանավորման և զարգացման տարբեր երկրների փորձում առանձնանում է նաև թվային ապրանքների և ծառայությունների կայուն արտադրության հնարավորության ստեղծումը, ինչպես նաև բովանդակային տեղեկատվության տրամադրումը տեղական շահառուներին[2]: Այսինքն՝ թվային տեխնոլոգիաները և տեղեկատվությունը տարածքների պլանավորման ու զարգացման կարևոր գործոններ են: Ընդհանրապես, որոշումների կայացման մեջ հանրային մասնակցության համակարգը բաղկացած է հետևյալ չորս բաղադրիչներից.[3] (1) հանրային մասնակցություն պլանավորման, որոշումների կայացման, իրականացման և վերահսկողության փուլերում, (2) ստեղծագործ և ակտիվ համագործակցություն հանրային, մասնավոր և քաղաքացիական հասարակության ոլորտների միջև, (3) սոցիալական և քաղաքական ընդլայնված համագործակցություն և կոնսենսուս, (4) հանրային հասանելիություն տվյալների և փաստաթղթերի նկատմամբ: Այսինքն՝ մասնակցությունը, համագործակցությունը և տեղեկատվությունը որոշումների կայացման կարևոր բաղադրիչներ են: Իսկ դրանք ապահովելու համար նորարարությունները և թվային տեխնոլոգիաների կիրառությունը կարող են հանդիսանալ առանցքային գործոններ:

ՀՀ տարածքային պլանավորման և զարգացման քաղաքականության մեջ նույնպես նպատակահարմար է ներառել նորարարությունների, թվային տեխնոլոգիաների և տեղեկատվության գործոնները: Դրանց արդիականությունը հիմնավորվում է հատկապես հա-

---

[1] OECD Innovation Policy Platform: Regional innovation strategies. www.oecd.org/innovation/policyplatform

[2] Draft Regional Information and Communication Technology (ICT) for Development Strategy, CARICOM երկրների խմբի համար կատարված հետազոտություն, 2016.

[3] National Sustainable Development Strategy, Belgrade, September 2007, p. 62.

մայնքների խոշորացման այժմյան փուլում, քանի որ այդ գործընթացը խնդիրներ է առաջացրել խոշորացված համայնքներ ընդգրկող տարածքային պլանավորման, հանրային մասնակցության և օպտիմալ կառավարման առումով: Մասնավորապես.

- խոշորացված համայնքների բնակչությունը տեղական որոշումների կայացման նպատակով չունի քննարկումներ կազմակերպելու որևէ հարթակ, որն էականորեն խոչընդոտում է տվյալ տարածքի պլանավորման և զարգացման գործընթացները:
- խոշորացված համայնքների ռեսուրսները համակարգված ձևով տեսանելի չեն տնտեսական և քաղաքական որոշումներ կայացնողների համար, որը նվազեցնում է այդ ռեսուրսների օպտիմալ կառավարման հնարավորությունը:

Այդ խնդիրների լուծման նպատակով կարելի է կիրառել էլեկտրոնային գործիքակազմ, որի միջոցով հնարավոր կլինի ապահովել ինչպես հանրային մասնակցություն, այնպես էլ օպտիմալ որոշումների կայացմանը նպաստող ռեսուրսների տեսապատկերում (visualization): Այսպես.

- Ցանցային կառավարման սկզբունքների ներդրումը հեռախոսային հավելվածների, կայքերի և երկխոսության հարթակների (blog) միջոցով իրատեսական կդարձնի հանրային մասնակցության աստիճանի բարձրացումը խոշորացված համայնքներում՝ տարածքային պլանավորման, կազմակերպման և զարգացման նպատակով:
- Գեոտեղեկատվական համակարգերի (GIS) կիրառմամբ կարելի է իրականացնել խոշորացված համայնքների կամ որոշակի այլ տարածքի քարտեզագրման և տարածական վերլուծության աշխատանքներ տնտեսական, աշխարհագրական, ժողովրդագրական, բնապահպանական ու այլ ռեսուրսների առումով՝ նպաստելով թվային ցուցանիշների և տեսապատկերման միջոցով օպտիմալ որոշումների կայացմանը:

Այսինքն՝ տեխնոլոգիական գործիքակազմի կիրառումը և նորարարությունները մի կողմից կմեծացնեն մարդ-համակարգիչ գործակցությունը, մյուս կողմից՝ կբարձրացնեն տեղեկատվության մշակման արդյունավետությունը՝ նպաստելով տարածքային պլանավորմանը և զարգացմանը:

СОС ХАЧИКЯН

ОСОБЕННОСТИ РЕГИОНАЛЬНОГО ПЛАНИРОВАНИЯ И РАЗВИТИЯ РА С ПОМОЩЬЮ ТЕХНОЛОГИЧЕСКИХ ИНСТРУМЕНТОВ

Ключевые слова: *региональное планирование, развитие, технологии, инновации, участие общественности, принятие решений*

В современных условиях развития региональная политика должна основываться на научно-технологических современных инструментах. Цифровые решения, научные и исследовательские разработки, социальный и человеческий капитал должны быть современными фак-

торами регионального развития - как особенности новой экономики. В этом смысле регионы имеют приоритеты, поскольку им предоставляется возможность проводить инновации, связанные с экологией, сельским хозяйством, муниципалитетом, экотуризмом и агротуризмом. Инновации могут быть связаны с участием общественности по местным вопросам, а также с визуализацией ресурсов для содействия оптимальному принятию решений. В этом контексте в статье обсуждаются два направления: (1) инвестирование принципов сети с помощью приложения смартфонов, веб-сайты и блоги и (2) применение геоинформационных систем (ГИС) для картографирования и анализа расширенных муниципалитетов или в другом регионе, чтобы повысить оптимальное принятие решений.

SOS KHACHIKYAN

THE FEATURES OF REGIONAL PLANNING AND DEVELOPMENT OF THE RA THROUGH TECHNOLOGY TOOLS

Key words: *regional planning, development, technology, innovation, public participatory, decision making*

In recent conditions of development the regional policy should be based on scientific-technological modern tools. The digital solutions, scientific and research evolutions, social and human capital should be contemporary factors for regional development – as features of new economy. In this sense the regions have priorities, as they are given the opportunity to carry innovations related to ecology, agriculture, community, ecotourism and agro-tourism. The innovations could be related to public participatory in local issues, as well as resources visualization to assist optimal decision making. In this context two directions are discussed in the article: (1) the investment of networking principles through smart phone applications, web sites and blogs, and (2) the application of geo-information systems (GIS) for mapping and analyzing consolidated communities or other region, in order to increase optimal decision making.

ԱՍՏՂԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի կրտսեր հետազոտող

ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԱՐՏԱԳԱՂԹԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Հիմնաբառեր. *արտագաղթ, արտագաղթին նպաստող գործոններ, որակավորմանը համապատասխան աշխատանք, եկամտի մակարդակ, կոռելյացիայի գործակից, միգրացիոն քարտ*

Հոդվածում ուսումնասիրվել են միգրանտների մասին տեղեկատվության հավաքագրման առկա աղբյուրները, վեր են հանվել դրանց թերությունները, և կարևորվել է միգրացիայի վարչական տեղեկատվական ամբողջացված աղբյուրների ստեղծման անհրա-